# Երաշխիքի համար պահանջվող փաստաթղթերի ցանկ

- Ձեռնարկվելիք գործունեությանը վերաբերող փաստաթղթեր (մրցութային հրավեր, պայմանագիր, հաշիվ-ապրանքագիր և այլն),
- Հիմնադիրների, տնօրենի և գլխավոր հաշվապահի անձը հաստատող փաստաթղթեր,
- Գործունեության տարածքի/ների սեփականության վկայական կամ վարձակալության պայմանագիր
- Լիցենզիա (լիցենզավորված գործունեության դեպքում),
- Հարկային տեսչությունից տեղեկանք պարտավորությունների մասին,
- էլեկտրոնային եղանակով Հարկային տեսչություն ներկայացված վերջին 1 տարվա հաշվետվությունները և հաշվետվություններն ընդունված լինելու վերաբերյալ ծանուցում,
- Գրավ/ների սեփականության վկայական, տեխնիկական անձնագիր, սեփականատերերի անձը հաստատող փաստաթղթեր, ամուսնության վկայական և գրավների լուսանկարներ,
- Իրավաբանական անձի կանոնադրության պատճեն,[1]
- Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի վկայականի պատճեն (իր ներդիրներով) և ՀՎՀՀ-ի պատճեն (իրավաբանական անձանց դեպքում պահանջվում է ըստ անհրաժեշտության),1
- Տեղեկանք իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրից,[1,2,3]
- Քաղվածք ռեեստրից՝ բաժնետիրական ընկերության դեպքում:3
- Իրավասու մարմնի (ընդհանուր ժողովի) որոշումը վարկ վերցնելու վերաբերյալ,[3]

[1] Փաստաթղթերը պահանջվում են, եթե ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի տվյալների շտեմարանում տվյալները կամ փաստաթղթերը բացակայում են կամ սխալ են:
[2] Տեղեկանքը կարելի է ստանալ Բանկից կամ ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալությունից, ընդ որում՝ իրավաբանական անձ հաճախորդների կողմից տեղեկանքի ներկայացումը պարտադիր է, իսկ անհատ ձեռնարկատեր հաճախորդների կողմից պարտադիր է իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի վկայականը իր ներդիրներով չներկայացնելու դեպքում:
[3] Կարող է ներկայացվել Բանկի կողմից երաշխիքը տրամադրելու վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո:
Բանկում հաշիվ չունենալու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև ,ԱԿԲԱ Բանկե ԲԲԸ-ում հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերը (բնօրինակները):

Տարաբնույթ հանգամանքներից ելնելով Բանկի կողմից կարող է պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն: Բանկը, Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» (“Know your customer”) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում տալ լրացուցիչ հարցեր: Հաճախորդի պատշաճ նույնականացման անհնարինության կամ հաշիվների սպասարկման անհնարինության դեպքում բանկի կողմից մատուցվող ծառայության հասանելիությունը կարող է սահմանափակվել: Ինչպես նաև, Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում, Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն: